ԿԱՆՈՆԱԳԻՐ
ԴԱՍՈՒՑ ԴՊՐԱՑ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԵՒ ԱՅԼՈՑ ԵԿԵՂԵՑԵԱՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

ՆՊԱՏԱԿ

Ա. — Մայրաքաղաքիս Մայր եկեղեցւոյն եւ ուրիշ եկեղեցիներուն մէջ եկեղեցական երգեցողութիւնները եւ դպրութեան վերաբերեալ արարողութիւնները անձնուիրաբար կատարել, երգեցողութեանց կանոնաւորութեան եւ զարգացման աշխատիլ, Դպրաց դասուն յառաջդիմութեան օգնել եւ Եկեղեցւոյ պայծառութեան գործակցիլ։

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Բ. — Որ եւ է եկեղեցւոյ մէջ Դպրաց դաս մը կանոնաւոր կազմութիւն ունենալու համար գոնէ տասը դպիր անդամներ պիտի ունենայ։

Գ. — Դպրաց դասու անդամ ըլլալու համար պէտք է. 1. Գոնէ տասնեւութը տարեկան ըլլալ. 2. Նախակրթական ուսում ունենալ. 3. Եկեղեցական երգեցողութեանց եւ արարողութեանց գոնէ տարիէ ի վեր յաճախած եւ վարժուած ըլլալ. 4. Պարկեշտ վարքով եւ կանոնաւոր կենցաղով ապրած ըլլալ. 5. Դպրաց դասուն Տնօրէն խորհրդոյ կողմէն ընդունուիլ. 6. Պատրիարքի կողմէն հաւանութիւն ստանալ.

Դ. — Անոնք որ տակաւին վարժութեան համար կամ լոկ պատահաբար եկեղեցական երգեցողութեանց կը մասնակցին, դպրաց դասուն ո՛չ անդամներ՝ այլ ընկերակիցներ կը համարուին։

Ե. — Դպիր անդամներն չորս փոքր աստիճաններ կ'ստանան Կրօնական Ժողովոյ հաւանութեամբ եւ Պատրիարքի հրամանով։

Զ. — Դպրաց դասուն մէջ Երիցագոյն կը համարուին անոնք որ քսանուհինգ տարին բոլորած են, հինգ տարի Դպրաց դասու մը ընկերակից եղած են, եկեղեցական երգեցողութեան վկայական ստացած են, կամ գոնէ իբր [illegible] կը [illegible]։

Է. — Դպրաց դասեր իբր Պատուոյ Անդամակիցներ կ'ընդունին եւ կ'արձանագրեն այն անձերը՝ որք արտաքին միջոցներով Դպրաց դասուն զարգացման կը նպաստեն։ Պատուոյ անդամներ մասնակից են Դպրաց դասուն կողմէ կատարուած պաշտամանց հոգեւոր արդեանց եւ հանդիսական պատուասիրութեանց։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ը. — Դպրաց դասերուն վերաբերեալ խնդիրներ Կրօնական Ժողովոյ կողմէն կը քննուին եւ կ'որոշուին, եւ գործադրութիւնը եւ ընդհանուր հսկողութիւնը Պատրիարքի կողմէ կը կատարուի։

Թ. — Իւրաքանչիւր Դպրաց դաս ունի իւր Դպրապետը, որ կ'ընտրուի Դպրաց ընդհանուր ժողովէն, քուէից երկու երրորդի մեծամասնութեամբ, երիցագոյն եւ ընտրելագոյն դպիրներուն մէջէն, եւ կը հաստատուի Կրօնական Ժողովոյ հաւանութեամբ եւ Պատրիարքական յատուկ կոնդակով։

Ժ. — Դպրապետը կը պաշտօնավարէ ցկեանս, եւ միայն ծանր յանցանաց կամ անընդունակութեան համար պաշտօնէ կը զրկուի Կրօնական Ժողովոյ վճռով։

ԺԱ. — Դպրապետը նախագահն է Դպրաց դասուն եւ իւր ժողովներուն. կը կարգադրէ պատահական եւ սովորական գործեր, եւ կարող է եկեղեցւոյ մէջ եւ դուրս դպիրներուն պատուէրներ տալ եւ առժամեայ զրկումներ հրամայել։

ԺԲ. — Դպրապետը կրնայ իրեն միայն Փոխանորդ մը նշանակել երիցագոյն եւ կարողագոյն դպիրներուն մէջէն, որ Դպրապետին գործերը կը կատարէ անոր բացակայութեան կամ անոր մասնաւոր յանձնարարութեամբ։

ԺԳ. — Իւրաքանչիւր Դպրաց դաս ունի Տնօրէն Խորհուրդ մը հինգ անդամներէ բաղկացեալ որք Ընդհանուր ժողովէ կ'ընտրուին պարզ մեծամասնութեան քուէով եւ Պատրիարքի պաշտօնագրով կը հաստատուին։ Ընտրելի են երիցագոյն դպիրները, որոց մէջէն Դպրապետը կրնայ երկպատիկ բաց ցանկ մը բերել ընտրութիւնը դիւրացնելու համար։ Տնօրէն ժողովոյ անդամք երեք միայն կը լինին եթէ Դպրաց դասուն անդամները տասնուհինգէ պակաս են։

ԺԴ. — Ընտրեալներ իրենց մէջ կը բաժնեն Ատենապետի, Ատենադպրի եւ Համարակալի, Գանձապետի եւ Կալուածապետի պաշտօնները, իւրաքանչիւրին յարմարութեան համեմատ, եւ կը հսկեն մէն մի պաշտօնին պատկանող գործերուն։

ԺԵ. — Ատենապետին կը պատկանին Դպրաց դասուն շահերը, [illegible] եւ Քահանայից եւ Թաղականին հետ յարաբերութիւններ, իւրաքանչիւր դպրին ընթացքին հսկողութիւն եւ եկեղեցական սպասաւորութեանց կարգապահութիւն։

ԾԸ. — Ընդհանուր ժողովներու մէջ բացարձակապէս արգիլեալ է Դպրաց դասուն բարերեալ գործերէ դուրս, որեւիցէ խնդրոյ վրայ խօսիլ՝ անսուլթիւն յայտնել ու- թիւն ընել ։

ԾԹ. — Ընդհանուր ժողովներու ատենագրութեանց վաւերական պատճէնները նիստէն մինչեւ երեք օր պէտք է Պատրիարքին հաղորդուին ։

Կ. — Տնօրէն ժողովներու կազմած տարեկան հաշուեցոյցը եւ հաշուական վիճակը ընդհանուր ժողովին ներկայացուած ատեն, միացեալ պիտի ունենան կալուածներու, վագֆներու, չափիկներու, նուէրներու, եւ առհասարակ դպրաց պատկանող բոլոր ստացուածոց եւ գոյից ցուցակները ։

ԿԱ. — Դպրաց դասերու ընդհանուր ժողովները կրնան բացատրական յօդուածներ եւ ներքին կանոններ կազմել, այլ միայն Կրօնական Ժողովոյ հաւանութեամբ եւ Պատրիարքական հաստատութեամբ կրնան գործադրութեան մտնել ։

ԿԲ. — Բոլոր դպրաց դասերու համար իբր ընդհանուր տօնախմբութեան օր ընդունուած է Ս. Ստեփանոս Նախավկայի եւ Նախասարկաւագի աւագ տօնը. եւ պէտք է որ ամենայն հանդիսութեամբ կատարուի եկեղեցական դասուն գործակցութեամբ։ Տօնական պարագաներ Դըպրապետի հրահանգով կը կարգադրուին ։

ԿԳ. — Դպրաց դասեր տարւոյն մէջ որոշեալ օր մը պիտի ունենան յատուկ մեծահանդէս պատարագ եւ հոգեհանգիստ կատարելին հանգուցեալ դպրապետներուն, դպիրներուն, պաշտօնեայ անդամակիցներուն եւ բարերարներուն համար ։

ԿԴ. — Իւրաքանչիւր դպրաց դաս սովորութիւն ունի տարին անգամ մը մեծ վերաբերման արարողութիւնը կատարել, որ կրնայ հոգեհանգստեան պատարագին կամ ուրիշ հանդիսաւոր պարագայի հետ միանալ ։

ԴՊՐԱՑ ԴԱՍԵՐ

ԿԵ. — Հնուց հաստատեալ եւ ծանուցեալ Դպրաց Դասերն են ։ Մայր Եկեղեցւոյ դպրաց դասը 1719 ին սկսած ժամագործ Եուսուփեան Յովսէփայ դպրապետութեամբ. Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ դպրաց դասը 1720 ին սկսած Թաշճեան Յակոբայ բարերարութեամբ. եւ Գալաթիու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ դպրաց դասը 1740 ին սկսած ։

ԿԶ. — Վերջերը կազմուած են եւս. Նարլը գաբուի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ դպրաց դասը 1882 ին. Մաքրիքէօյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրաց դասը 1897 ին. Կէտիկփաշայի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ դպրաց դասը 1898 ին, եւ Գումգաբուի դուրսի Ս. Յարութիւն եկեղեցւոյ դպրաց դասը 1902 ին ։

ԿԷ. — Նոր դպրաց դասեր կազմելու համար, բոլոր կարեւոր պայմանները լրացուելէն ետքը պէտք է Կրօնական Ժողովոյ կողմանէ հաստատուին եւ Պատրիարքական կոնդակով վաւերացուին ։

[illegible] կողմանէ որոշուելիք ժամանակաւոր մատակարարութեամբ կը վարուին, մինչեւ որ թիւերնին լրանալով դաս մը կազմեն, կամ թէ իսպառ դադարին ։

ԿԹ. — Դադարեալ կամ լուծեալ դպրաց դասերու պատկանող շարժական եւ անշարժ ամեն կալուած եւ չափիկ եւ ստացուածք եւ գոյք՝ սեփականութիւն կը լինին այն եկեղեցւոյ, որոյ մէջ պաշտօն ունէր դադարեալ կամ լուծեալ դպրաց դասը ։

Հ. — Ներկայ Կանոնագրով դադարեալ կը համարուին մինչեւ ցարդ կազմուած կամ հաստատուած, ընդհանուր եւ մասնաւոր կանոնագիրներ եւ որոշումներ եւ հրահանգներ ։

Հաստատեցաւ Կանոնագիրս ի Կրօնական Ժողովոյ Ազգային Կեդրոնական Վարչութեան յաւուր տօնի Սրբոց Ղեւոնդեանց յ3 Փետրուարի 1904 տարւոյ, եւ ըստ այնմ հրամայեմք ի հրատարակութիւն եւ ի գործադրութիւն ։ — Ի Պատրիարքարանիս, ի 5 Փետրուարի 1904

ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԺԶ. — Սաղմոսերգիչներ և Հաստատակալներ կը պատկանին տաղանդաւորներ, թղթակցուներներ, հաչուական տումարներ, և կալուածական ու կոտակային և ուրիշ վաւերական գրուածքներու պահպանութիւն։

ԺԷ. — Գանձապետին և Կալուածապետին կը պատկանին շապիկներու և այլ գոյից վերին հագուստներ, կալուածներու մասամբարարութիւն, պնակներու և գանձանակներու հսկողութիւն, հասոյթներու հաւաքում, ծախուց գործադրութիւն, պատրաստ դրամի պահպանութիւն և մնացուկի տումար։

ԺԸ. — Դպրաց դասուն կնիքը երկու մասով և դրամի արկղը երկու բանալիով պիտի ըլլան։ Կնիքին կէսը Դպրապետին և միւս կէսը Սաղմոսերգին, և բանալիներէն մին Սաղմոսերգին և միւսը Գանձապետին մօտ պիտի մնան։

ԺԹ. — Տնօրէն խորհրդոյ անդամներ թէպէտ յատուկ գործերնին ունին. սակայն յամենայնի համախորհուրդ պէտք է գործեն. և առ այս պէտք է որ ձմեռը ամեն չաբաթ և ամառը երկու չաբաթը անգամ մը նիստ ընեն Դպրապետի նախագահութեամբ։

Ի. — Տնօրէն խորհրդոյ պաշտօնավարութիւնը երեք տարի կը տեւէ, և նախորդ անդամներ միշտ վերընտրելի են։ Տարեգլուխը յաջորդաբար մէկէն է։

ԻԱ. — Դպրաց դասեր եկեղեցւոյ պաշտամանց մասին պիտի յարգեն և պիտի հաստատեցնեն Բարոզչին և Աւագերէցին կարգադրութեանց։

ԻԲ. — Դպրաց դասեր եկեղեցւոյ շուրջը կատարուող ամէն գործողութեանց համար պարտաւոր են Թաղական խորհրդոյ դիմել և անոնց հաւանութեամբ կատարել։

ԻԳ. — Դպրաց դասեր իրենց ընթացքին և ներքին գործոց և հաչիւներու մասին կախում ունին Կրօնական Ժողովէն։

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԻԴ. — Դպրաց դասուն մուտքերն են. 1. Կալուածներու եկամուտ. 2. Վաղֆներու հասոյթ. 3. Եկեղեցւոյ մէջ չրջաբերուած պնակի արդիւնք. 4. Եկեղեցւոյ մէջ հաստատուած գանձանակի արդիւնք. 5. Մանաւոր նուէրներ. 6. Եւս և նոր վաղֆներ և նոր կատակներ օրինական պայմաններու պահպանութեամբ։

ԻԵ. — Դպրաց դասուց ծախքերն են. 1. Դիւանական ծախքեր. 2. Դպրաց սենեկի ծախքեր. 3. Ուսուցչի թոշակ. 4. Կալուածներու և վաղֆներու ծախքեր. 5. Շապիկներու և այլ գոյքերու նորոգութիւն. 6. Նոր շապիկներու չինութիւն. 7. Հանդիսութեանց պէտքեր։

ԻԶ. — Եկեղեցւոյ մէջ գործածուելու գրեանք և մոմեղէնք Թաղական խորհրդոց կողմէ կը հոգացուին։

ԻԷ. — Բոլոր ծախքեր Տնօրէն խորհրդոյ միաձայն հաւանութեամբ կամ գոնէ մեծամասնութեամբ կ'որոշուին և կ'արձանագրուին, և Գանձապետի ձեռօք կը գործադրուին։

ԻԸ. — Շապկապահը Տնօրէն խորհուրդէն կ'անուանուի և դպրաց մէջէն կ'առնուի և [illegible] տալ անոր, եթէ այդ նպատակին կարօտ է։

ԻԹ. — Տնօրէն խորհուրդը երեք ամիսը մէկ անգամ անատուկին մուտքն ու ելքը կը քննէ և անատուկի հաչուետումարը կը հաստատէ։

Լ. — Տարեկան հաչիւներ Դպրաց ընդհանուր ժողովէն անցնելէ ետքը Պատրիարքին կը ներկայացուին որ Կրօնական Ժողովոյ և Տնտեսական խորհրդոյ ձեռօք քննել կուտայ և ըստ այնմ կը հաստատէ կամ թէ դիտողութեամբ կը դարձնէ։

ԼԱ. — Վաղֆներու գործողութիւնները Պատրիարքի ձեռքով և կնքով և Պատրիարքարանի մէջ կը կատարուին ուրիշ ազգային վաղֆներու նման. և զուտ արդիւնքը Տնօրէն խորհրդոյն կը յանձնուի։

ԼԲ. — Տնօրէն խորհուրդը իրաւունք չունի պարտք ընել կամ փոխառութիւն կատարել առանց նախընթաց պաշտօնական քննութեան և Կրօնական Ժողովոյ արտօնութեան, թէ ոչ ընողներ անձնապէս պատասխանատու կը մնան։

ԼԳ. — Դպրաց դասը եկեղեցւոյ չրջափակին մէջ Թաղական խորհուրդէ յատկացեալ սենեակ կամ Ուսումնարան մը պիտի ունենայ իւր դումարումներուն և երդեցողութեան վարժութիւններուն համար։

ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

ԼԴ. — Դպիրք պարտաւոր են պարկեշտ, կանոնաւոր և քրիստոնէավայել կենցաղ ունենալ և ամեն տեսակ դեղծումներէ զգուշանալ։

ԼԵ. — Ամբաստանեալ կենցաղ ունցող դպիրներ Դպրապետէ կ'ազդարարուին, Տնօրէն խորհուրդէ կ'ամբաստանուին, և Պատրիարքէ ժամանակաւոր զրկման և կամ մերժման պատժոյն կ'ենթարկուին։

ԼԶ. — Նոյն խստութիւն կը գործածուի նաև անոնց նկատմամբ՝ որք սիրոյ և համերաշխութեան դէմ կը մեղանչեն, Դպրաց դասուն մէջ որոմ կը սերմանեն, և կամ դպրութեան պաշտօններուն և պարտաւորութիւններուն զանցառու կը գտնուին։

ԼԷ. — Դպիրք առհասարակ ինչ ասիճան և պաշտօն ալ ունենան, պարտաւոր են եկեղեցի յաճախել և երգեցողութիւններ կատարել կիրակի և ատն օրեր, և ըստ կարի նաև լուր օրեր, քանի որ օրինաւոր արգելք մը չունին։

ԼԸ. — Դպիրք կրնան իրենց եկեղեցիէն դուրս ուրիշ եկեղեցւոյ մէջ հաստատուն պաշտօն ստանձնել, բայց Դպրապետին պիտի հաղորդեն, և մերթ ընդ մերթ իրենց դասուն եկեղեցւոյն մէջ գտնուիլ պարտաւոր են։

ԼԹ. — Դպիրք պարտաւոր են որոշեալ օրեր և ժամեր իրենց անձերը յանձնել և Դասապետ ուսուցչին առաջնորդութեամբ վարժութիւններ ընել, և երգեցողութեան և ձայնագրութեան մէջ յառաջանալ։

Խ. — Յատուկ խնամ պիտի տարուի որ դպիրք եկեղեցական կարգաց և կանոնաց, և ծիսական գրեանց՝ և յառաջապէս տօնացոյցի կիրառութեան վարժ ըլլան։

ԽԱ. — Դպրաց դասու անդամակիցք պիտի ջանան որ եկեղեցական երգեցողութեան վկայական ստանան իրենց կարողութեան աստիճանին համեմատ։

ԽԲ. — Ցանկալի է մէկ եկեղեցւոյ դպիրներուն մերթ ընդ մերթ ուրիշ եկեղեցիներ ալ երթալը, մանաւանդ տօնական աւուրներուն, որով փոխադարձաբար իրարու օգնած, եկեղեցական սէր մշակած և երգեցողութեանց միակերպութեան նպաստած կ'ըլլան։

ԽԳ. — Դպիրներ ուրիշ եկեղեցի երթալնին իրենց Դպրապետին կամ դասապետին պիտի զեկուցանեն, և գացած եկեղեցինին Թաղականին կամ Աւագերէցին կամ Դպրապետին հրաւէրով շապիկ պիտի առնեն։ Ոչ ոք ինքնագլուխ կարող է շապիկ հագնիլ իր եկեղեցիէն դուրս։

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

ԽԴ. — Երգեցողութեան մէջ մասնաւոր ուշադրութիւն դարձնելու և հետևելու կէտերն են. 1. Հնաւանդ ոճն ու երգը պահպանել. 2. Օտարոտի և նորելուկ փոփոխութիւններէ խորշիլ. 3. Տարապարտ և քմահաճոյ երկարութիւններէ զգուշանալ. 4. Միակերպութեան նախանձախնդիր ըլլալ։

ԽԵ. — Ձայնագրութիւնը ընդունուած է իբրև ապահով միջոց միօրինակութիւնը պահելու և տարածելու. ուստի յատուկ կերպով կը յանձնարարուի ձայնագրութեան վարժուիլ և վարժեցնել և ձայնագրութեամբ երգել։

ԽԶ. — Երգեցողութեանց մասին որոշումներ և կարգադրութիւններ և հրահանգներ Կրօնական Ժողովոյ կողմէ կը տրուին, յատուկ Յանձնաժողովոյ ուսումնասիրութեանց վրայ։

ԽԷ. — Իւրաքանչիւր Դպրաց դասուն համախումբ երգեցողութիւնը կը վարէ երգեցողութեան ուսուցիչը իբր ընդհանուր Դասապետ, որ պէտք է առաջին աստիճանի վկայական ստացած, ծէսերու հմուտ և կարողագոյն ճանչցուած երգեցող մը ըլլայ։ Ուսուցչութեան պաշտօնը պիտի վարէ թէ Դպրաց դասուն և թէ թաղին երկու սեռէ վարժարաններուն մէջ, և պիտի անուանուի Թաղական խորհրդոյ և Դպրաց դասու Տնօրէն խորհրդոյ համաձայնութեամբ։

ԽԸ. — Դասապետ ուսուցիչը ամսական թոշակ կ'ընդունի ուղղակի Դպրաց դասուն կողմէն, որուն կը յանձնէ Թաղական խորհուրդն ալ իր վճարելիք մասը։ Ուսուցիչը կրնայ Դպրաց դասէն դուրս ալ առնուիլ, բայց ցորչափ կը պաշտօնավարէ նոյն Դպրաց դասուն անդամակցութիւնը կը վայելէ։

ԽԹ. — Դպրաց դասուն երիցագոյն անդամներէն երկուքը մասնաւոր դասապետ կամ դպրաց համար Դասագլուխ կ'անուանուին Տնօրէն խորհրդոյ և [illegible] համաձայնութեամբ, և երկու դասերու երգեցողութեանց կ'առաջնորդեն։ Ուր որ Դպրաց դասը բազմաթիւ է՝ հնար է անոնց օգնականներ ալ անուանել։ Դպրաց Դասագլուխներուն բացակայութեան ատեն ներկայ դպիրներուն երիցագոյն և յարմարագոյնը կը վարէ նոյն պաշտօնը։

Ծ. — Դպիրներ իրենց աստիճանին և վարժութեան և ձայնին նկատողութեամբ և հաստատուն կերպով երկու դասերու վրայ կը բաժնուին Դպրապետի կարգադրութեամբ, թէպէտև ի հարկին իրարու պէտք է օգնեն։

ԾԱ. — Ճաշու գիրքերը և Պատարագի [illegible] սպասաւորութիւններն և Գանձերու կամ քարոզներու երգեցողութեան ընկերակցութիւնը՝ Դպրաց դասու անդամակիցներուն կը պատկանին։

ԾԲ. — Դպիրներ պատարագի և ժամերգութեանց ժամանակ միշտ շապիկով դաս կը մնան։ Հնար է սովորական ժամերգութեանց պահուն սև վերարկու գործածել եթէ տեղական սովորութիւն կամ դիւրութիւն կայ։ Դասի մէջ միշտ բացագլուխ պիտի կենան. բայց տարիքաւորներու և տկարներու ներեալ է ցուրտ ժամանակներ փոքրիկ և գագաթը բոլորշի սև գտակներ գործածել։

ԾԳ. — Արարողութեանց միջոցին պէտք է՝ պարկեշտ և վայելուչ շարժուածք և նստուածք ունենալ. գռեհիկ ձևերէ և աշխարհիկ երաժիշտներու կերպերէն զգուշանալ, աւելորդ և անտեղի պատճառներով դասէ չհեռանալ, և միշտ հաւատացելոց շինութիւն ազդել։

ԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՀԱՆԴԷՍՆԵՐ

ԾԴ. — Դպրաց դասեր սովորական ըլլալով ընդհանուր ժողով կը գումարեն տարին երկու անգամ. իսկ արտասովոր կերպով երբ ընտրութեանց պէտք ըլլայ կամ ծանր խնդիր մը [illegible] ունենայ։

ԾԵ. — Ընդհանուր ժողովը կը գումարուի Դպրապետին հրաւէրով և նախագահութեամբ, որ ատենապետութիւնն ալ կը վարէ. բայց արտասովոր գումարմանց համար նախապէս Պատրիարքի հաւանութիւնը պիտի ստացուի։ Ատենադպրի պաշտօնը կը վարէ Տնօրէն խորհրդոյ ատենադպիրը։

ԾԶ. — Ընդհանուր ժողովի գործերն են, 1. Ընտրութիւն Դպրապետի. 2. Ընտրութիւն Տնօրէն խորհրդոյ. 3. Ընդունելութիւն պատուոյ անդամներու. 4. Քննութիւն տարեկան հաշիւներու. 5, Որոշումն դպրաց դասուն վերաբերեալ ծանր խնդիրներու կամ նշանաւոր բար[illegible]քումներու։

ԾԷ. — Ընդհանուր ժողովներու մէջ ձայն ունին և ընտրողի քուէ կը վայելեն ամէն դպիր անդամներ. իսկ ընտրելի են միայն երիցագոյն դպիրներ։ Ընտրութիւնք կը կատարուին գաղտնի քուէով։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0321295

ЦЕНА

Прп

902